600.0373.09.10.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

9 հոկտեմբերի 2019 թվականի №373Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի №96Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված կարգը, այդ թվում՝ կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը, և հաշվի առնելով «ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի սեպտեմբերի 17-ի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 29-ի «ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Տիգրան Մեծ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №96Ա որոշմամբ «ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0574 լիցենզիայի կառուցման ժամանակահատվածը մեկ տարի տասն ամսով՝ որոշման մեջ «մինչև 2019 թվականի հոկտեմբերի 17-ը» բառերը փոխարինելով «մինչև 2021 թվականի օգոստոսի 17-ը» բառերով:
2. «ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ԼԷ №0574 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Տիգրան Մեծ» փոքր

հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2017 թվականի դեկտեմբերի 4-ի №O.AB.100.11CB.ESC.2.5169.17 երաշխիքի համաձայն երաշխավորված 9 207 500 (ինը միլիոն երկու հարյուր յոթ հազար հինգ հարյուր) դրամ գումարից 4 603 750 (չորս միլիոն վեց հարյուր երեք հազար յոթ հարյուր հիսուն) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 9 207 500 (ինը միլիոն երկու հարյուր յոթ հազար հինգ հարյուր) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2021 թվականի հոկտեմբերի 1-ը գործողության ժամկետով:

3. «ՌՈՒՍ ԸՆԴ ՀԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հոկտեմբերի 17-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Մ. ԱՂԻՆՅԱՆ**

ք. Երևան
9 հոկտեմբերի 2019թ.